ՎՐՁՆԻ
ՀԱՅ
ՎԱՐՊԵՏՆԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ

ՎՐՁՆԻ ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐ

АРМЯНСКИЕ МАСТЕРА КИСТИ

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

1880—1972

МАРТИРОС САРЬЯН

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖՈՆԴ
«ԷՐԵԲՈՒՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1989

АРМЯНСКИЙ ФОНД КУЛЬТУРЫ
ИЗДАТЕЛЬСТВО «ЭРЕБУНИ»



«Հայաստանի լույսը հասնում է մեզ շնորհիվ Մարտիրոս Սարյանի: Լույս երջանիկ՝ մարդկանց, լեռների, ծաղիկների վրա... Սա մի գանձ է վերագտնված: Այնքան գեղեցիկ է նրա գույնը, որ դարերը մեր Սեզանի ու Մատիսի կողքին Սարյանին պիտի հատկացնեն առաջնակարգ տեղ»:

ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ

Մարտիրոս Սարյանը արդի հայ նկարչության սկզբնավորողն է, նահապետը: Ի տարբերություն իրեն նախորդած վրձնի հայ վարպետների, նա մինչև վերջ խզեց կապերը ուսումնառության շրջանում ձեռք բերած գեղանկարչական մեթոդներից և ընթացավ ինքնուրույն ճանապարհով: Սարյանի արվեստը իր ոճական առանձնահատկությամբ մի կողմից հենվում է 20-րդ դարասկզբի ռուսական և ֆրանսիական նկարչության նվաճումներին, մյուս կողմից՝ ազգային մշակույթի հինավուրց ավանդներին: Այս երկու ակունքներից վերցրածը Սարյանը կարողացավ ձուլել սեփական խառնվածքին ու աշխարհընկալմանը և ստեղծել միանգամայն ինքնատիպ ու արդիական արվեստ:

Մ. Սարյանը ծնվել է Նոր-Նախիջևանում (Դոնի ափին), մասնագիտական կրթությունը ստացել Մոսկվայի նկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում: 1901-ին, ավագ եղբայր Հովհաննեսից դրամական օգնություն ստանալով, Մարտիրոսը որոշում է ճամփորդել և առաջին հերթին տեսնել իր նախնիների երկիրը՝ Արարատը, Էջմիածինը, Սևանը, որոնց մասին հեքիաթ-պատմություններ էր լսել ծնողներից, Անին՝ որտեղից սերում էր իրենց տոհմը:

Երիտասարդ նկարիչը այնքան է հափշտակվում նոր բնաշխարհով, որ հաջորդ տարիների ամառվա ամիսները կրկին անցկացնում է Հայաստանում: Շփումը մայր երկրի հետ կոփում է Սարյանի հայրենասիրական ոգին ու կանխագծում նրա ստեղծագործության ողջ ուղին:

«Բնությունը ստեղծում է մարդուն, որպեսզի մարդու միջոցով տեսնի իրեն, հմայվի իր հրաշք գեղեցկությամբ: Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ, մահ գոյություն չունի»,— այսպես է Սարյանը ձևակերպել իր աշխարհընկալումը այդ տարիներին: Հայրենի տպավորություններով ներշընչ-

ված նկարչի առաջին (1903—1908) աշխատանքները, որոնց նա տվել է «Հեքիաթներ ու երազներ» ընդհանուր խորագիրը («Արարատի ստորոտին», «Արևի հմայքը», «Ախուրյան ձորում», «Բանաստեղծը» և այլն) ունեն սիմվոլիկ նկարագիր և ամբողջացած են դիտողին կենսախինդ ապրումներ հաղորդող կապույտ, նարնջագույն, մոխրագույն, կանաչ գույների թրթռուն, երգող ներդաշնակումներով: Մարդիկ, բուսականությունը, կենդանիները, թռչունները, նույնիսկ գիշատիչները այստեղ ապրում են խաղաղ, մեկ ընտանիք կազմում: Բնությունն այնքան անընդգրկելի է, խորհրդավոր, որ նկարիչն այն ընկալում է մանկան պես, իբրև երազ-իրականություն, ասես իբրև դրախտ:

Հավատարիմ իր բնապաշտական գաղափարներին, Սարյանը հետևողականորեն ընթանում է սեփական ոճի բյուրեղացման ճանապարհով: 1909-ից սկսում է նրա արվեստի երկրորդ շրջանը: Նա հեքիաթային, երևակայական թեմաներից անցնում է կենդանի իրականության պատկերմանը: Շուտ չորացող տեմպերային ներկերը նկարչին հնարավորություն են ընձեռում աշխատելու արագ, վրձնի լայն քսվածքներով որսալու տեսանելիի ամենաբնորոշ գծերը: Սարյանի կտավներում բնության ձևերը ծայր աստիճանի պարզեցված են և ներկայացված հարթ ընդհանուր գույնով: Սարյանական գույնը միաժամանակ լույս է կրում իր վրա: Լույսի պայծառությունը միշտ պայմանավորվում է գույնի հնչողությամբ:

Անապատի հեռավոր անկյունում, երկնքի անհուն կապույտի մեջ լայնաթև ճյուղերն է պարզել փյունիկյան արմավենին: Արևի կիզիչ լույսի իշխանությունն զգացվում է ամենուր՝ մարդկանց, կենդանիների, տնակների վրա: Լույսի ու գույնի զմայլելի զուգերգը կյանքի, հրճվանքի երջանիկ ու անմոռաց զգացումներ է հաղորդում դիտողին: «Հայաստանի ծաղիկները» նատյուրմորտում վճիտ գույները հնչում են զանգակների բերկրալի ղողանջների նման:

«Իմ նպատակն է,— գրել է Սարյանը այդ շրջանում,— հասնել ռեալիզմի նախահիմքերին, պարզ միջոցներով հասնել առավելագույն արտահայտչականության: Խոսքս արտահայտման այն ուժի մասին է, որ հատուկ է արվեստի բոլոր իսկական երկերին, ավելի ճիշտ հմայքի այն ուժի մասին, որ տարբեր ուղիներով հասել են բոլոր ժամանակներում»:

Իր արվեստի հմայքի ուժը, որ գտավ Սարյանը ուրույն ճանապարհով, նրա պատկերների մաքուր, հնչեղ գույներից ճառագող լույսն է: Դիտողին կենսուրախ, երջանիկ ապրումներ ներշնչող այդ լույսը ընկալվում է իբրև կյանքի աներեր հավատի խորհրդանիշ, իբրև մայր ժողովրդի դարերում կոփված կենսասիրության արտահայտություն: Իր մշակած ու միայն իրեն պատկանող գեղանկարչական լեզվով Սարյանը հավիտենություն պատգամող լեգենդներ հյուսեց: Ինչպես իր սերնդակիցներ, Կոմիտասը՝ երաժշտության, Թորամանյանն ու Թամանյանը՝ ճարտարապետության մեջ, այնպես էլ Սարյանը վերածնեց մաքուր գույնի ավանդները, հայտնաբերեց նկարչության ազգային ոճի վերակերտման ուղին, որով և կատարեց անգնահատելի դեր հայ մշակույթի պատմության մեջ:

Արվեստագետի ստեղծագործության բուռն վերելքը իր սերնդակիցներից շատերի նման ընդհատվեց 1915-ին: Հայրենասեր նկարիչը թողեց վրձինը և Մոսկվայից եկավ Էջմիածին իր անձնական օգնությունը ցույց տալու եղեռնից փրկված հայ գաղթականներին, մասնավորապես զբաղվելով հիվանդ երեխաների փրկության խնդրով:

Հետագա հինգ տարիներին Սարյանի կյանքը փոխարինվեց հայրենանվեր գործունեությամբ: Իսկ 1920-ին, երբ Արևելյան Հայաստանում հաստատվեց Սովետական իշխանություն, նկարիչը անմնացորդ նվիրվեց հայրենիքի վերաշինության սուրբ գործին: Նրա ակտիվ մասնակցությամբ Երևանում հիմնվեցին մշակութային մի շարք օջախներ՝ Պատմության և կերպարվեստի թանգարանը, գեղարվեստական ուսումնարանը, հնությունների պահպանության կոմիտեն:

Վերածննդի ոգին խանդավառեց Սարյանին: Կյանքը, գեղեցիկը սիրող նկարչի հավատը ընդհանրացավ, դարձավ համաժողովրդական ոգևորության արտահայտություն: Իր ստեղծագործության այս նոր՝ երրորդ շրջանի մասին նա գրել է. «Իմ ձգտումն է դաժան արհավիրքներով անցած, արյամբ ու հավատքով սրբագործված մեր փոքր երկիրը կտավի վրա ցույց տալ իր շոշափելի գոյությամբ: Արագածի փեշը կազմող այս հողակտորը ես դիտում եմ իբրև հույսի աղբյուր, մեր հին ժողովրդի փայփայած իդեալների հենարան, իբրև նրան եռանդ ու կորով սնուցող մայր»:

Սարյանի նոր կտավներում (այս շրջանում նա նկարում է յուղաներկերով) օդի, լույսի ու գույների կախարդիչ ներդաշնակության մեջ մարմնավորում է գտել Հայաստանի հավաքական կերպարը, ներթափանցված խաղաղության ու վերածննդի ոգով: Այս նույն ոգով Սարյանը ստեղծում է Խորհրդային Հայաստանի գերբն ու առաջին պետական թատրոնի վարագույրը:

Մեծ արվեստագետն այնքան է սիրում ու կապվում իր հողին, որ մեկուկես տարի ապրելով Փարիզում, պանդուխտ բանաստեղծի նման շարունակում է երգել հայրենի բնաշխարհի գեղեցկությունը: 1928-ին, Փարիզում բացվում է նրա անհատական ցուցահանդեսը, սակայն, ցուցադրված կտավների մեծ մասը վերադարձի ճանապարհին հրդեհի զոհ են դառնում: Պատերազմի ու եղեռնի ողբերգությունը վերապրած նկարիչը կարողանում է հաղթահարել նաև անձնական այդ վիշտը:

Մինչև իր երկարամյա կյանքի ավարտը, Հայրենիքը դառնում է Սարյանի գլխավոր և անփոփոխ թեման: Գույնի մեծ բանաստեղծը սերունդներին է ժառանգում մի վիթխարի պատկերասրահ, ավելի քան երեք հազար գործ՝ բնանկարներ, դիմանկարներ, մրգեր ու ծաղիկներ պատկերող նատյուրմորտներ, թատերական ձևավորումներ, պաննոներ, գրքերի ու հեքիաթների նկարազարդումներ: Ստեղծագործելու եռանդը երբեք չի լքում նկարչին: Իննսուն տարեկան հասակում ստեղծում է հզոր երևակայությամբ ներշնչված կտավներ ու գծանկարներ, որոնք բացում են նոր էջ նրա արվեստում:

Արվեստի բարձր, լուսավոր իդեալներին ծառայելու ձգտումը Սարյանի մոտ ներդաշնակվեց Հայրենիքի հանդեպ նրա տածած անհուն սիրով: Այդ սերը Հայաստանին պարգևեց մի «Հայաստան»:

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Մ. Սարյանի թանգարանը Երևանում — Музей М. Сарьяна в Ереване

I, ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ. 1909. ստվարաթուղթ, տեմպերա 47×45
Պետական Տրետյակովյան պատկերասրահ. Մոսկվա

II, ԱՐԱՐԱՏԻ ՍՏՈՐՈՏԻՆ. ՀԵՔԻԱԹ. 1904, թուղթ, ջրաներկ 24×33
Մ. Սարյանի թանգարան

III, ԲԱՆԱՍՏԵՂԾԸ. ԱՐԱԳԱԾԻ ՓԵՇԵՐԻՆ. 1906
Տեղն անհայտ է

IV, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱՆԿԱՐ. ՂԱՐԱՔԻԼԻՍԱ. 1901, կտավ, յուղաներկ 45×60
Տեղն անհայտ է

V, ԳՈՂԹԱՆ ԼԵՌՆԵՐ. 1914, կտավ, տեմպերա 35×36
Հ. Հարությունյանի ընտանիքի հավաքածու. Մոսկվա

VI, ՓՈՂՈՑԸ ԵՐԵԿՈՅԱՆ. 1910, ստվարաթուղթ, տեմպերա 33,5×47
Կ. Պասմաճյանի հավաքածու, Փարիզ

VII, ՀԻՆ ԹԻՖԼԻՍ. 1917, կտավ, տեմպերա 84×75
Վրացական արվեստի պետական թանգարան. Թբիլիսի

VIII, ԿԻՋԻՉ ՕՐ ԼԵՌՆԵՐՈՒՄ. 1926, կտավ, յուղաներկ 54×65
Նիկոլաևի գեղարվեստական թանգարան

IX, ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ. 1910, ստվարաթուղթ, տեմպերա 62,2×58,7
Գորկու գեղարվեստական թանգարան

X, Ի. ՇՉՈՒԿԻՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ. 1911, կտավ, տեմպերա 95×85
Ի. Աֆանասևի ընտանիքի հավաքածու. Լենինգրադ

XI, ԴԵՂԻՆ ԾԱՂԻԿՆԵՐ (Ջան Գյուլում). 1914, կտավ, տեմպերա 83×73
«Ա. Աբրահամյանի հավաքածու» թանգարան. Երևան

XII, ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ. 1915, կտավ, տեմպերա 102×110
Վ. Կունինի հավաքածու. Լենինգրադ

XIII, ԿԱՐՄԻՐ ՁԻ. 1919, կտավ, յուղաներկ 104×140
Հ. Հարությունյանի ընտանիքի հավաքածու. Մոսկվա

XIV, ԿԱՆԱՉԵՂԵՆ ՎԱՃԱՌՈՂԸ. 1912, կտավ, տեմպերա 76,5×88,5
Կիևի ռուսական արվեստի թանգարան

XV, ՓՅՈՒՆԻԿՅԱՆ ԱՐՄԱՎԵՆԻ. 1911, ստվարաթուղթ, տեմպերա 106×71
Պետական Տրետյակովյան պատկերասրահ. Մոսկվա

XVI. ՊՏՈՒՂՆԵՐ. 1911, ստվարաթուղթ, տեմպերա 50×66,8
Աստրախանի պատկերասրահ

XVII, ԱՐԱՐԱՏ. 1923, կտավ, յուղաներկ 36×47
Ա. Կարինյանի հավաքածու. Երևան

XVIII. Կ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ. 1935, կտավ, յուղաներկ 45×38
Մ. Սարյանի թանգարան. Երևան

XIX, ԱՊՐԻԼՅԱՆ ԲՆԱՆԿԱՐ. 1944, կտավ, յուղաներկ 54×73
Հ. Բաղրամյանի ընտանիքի հավաքածու. Մոսկվա

XX, ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ. 1943, կտավ, յուղաներկ 67×75
Գրականության և արվեստի թանգարան. Երևան

XXI, ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ. ՊՏՈՒՂՆԵՐ ԵՎ ԲԱՆՋԱՐԵՂԵՆ. 1934, կտավ, յուղաներկ 73×92
Հ. Թարվերդյանի հավաքածու. Երևան

XXII, ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ. 1961, կտավ, յուղաներկ 79×102
Արևելյան ժողովուրդների արվեստի թանգարան. Մոսկվա

XXIII, ՋԱՆԳՎԻ ԱՓԵՐԸ. ՋՐԱՂԱՑՆԵՐ. 1930, կտավ, յուղաներկ 50×61
Ռ. Արիստակեսյանի հավաքածու. Երևան

Շապիկի վրա՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՂԻԿՆԵՐ. 1916, կտավ, յուղաներկ 72×65
Կիևի ռուսական արվեստի թանգարան

ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐ. 1926, կտավ, յուղաներկ 70×70
Մ. Սարյանի թանգարան. Երևան



1

II

III

IV

V



VI

VII

VIII

IX

X

XI

EDITIONS
EREBOUNI

XIII

XIV



XV

XVI

XVII



XVIII

XIX



XX

XXI



XXII

XXIII

Printed in Finland by Yhteiskirjapaino Oy 1984

Свет Армении доходит до нас благодаря Мартиросу Сарьяну. Радостный свет, озаряющий людей, горы, плоды... Это сокровище, найденное вновь. Цвет у него столь прекрасен, что рядом с нашими Сезанном и Матиссом столетия должны отвести Сарьяну первостепенное место.

Л. АРАГОН

Мартирос Сарьян — основоположник и патриарх современной армянской живописи. В отличие от предшествовавших ему армянских мастеров кисти он окончательно порвал с живописными методами, приобретенными в период учения, и пошел собственным путем. В своем стилистическом своеобразии искусство Сарьяна опирается, с одной стороны, на достижения русских и французских художников начала XX века, с другой — на древние традиции национальной культуры. Все то, что он почерпнул из двух этих источников, Сарьян слил воедино с собственной личностью и мировосприятием и создал совершенно самобытное искусство, созвучное искусству начала нашего века.

М. Сарьян родился в Новом Нахичеване (на берегу Дона), специальное образование получил в Московском училище живописи, ваяния и зодчества. В 1901 году при материальной поддержке старшего брата Ованеса решил предпринять путешествие в страну предков, увидеть Арарат, Эчмиадзин, Севан, о которых столько рассказывали ему отец и мать, и Ани, откуда происходит род Сарьянов.

Впечатления от этого путешествия были столь сильны, что в последующие годы молодой художник вновь проводит летние месяцы в Армении. Встреча с родиной укрепила патриотический дух Сарьяна и предопределила весь его творческий путь.

«Природа создает человека, чтобы, взглянув на себя его глазами, восхититься изумительной своей красотой. Человек — природа, природа — человек. Смерти не существует»,— так сформу-

лировал Сарьян свое мироощущение тех лет. Вдохновленные природой Армении первые (1903—1908) работы художника — он дал им общее название «Сказки и сны» («У подножия Арарата», «Чары солнца», «В ущелье Ахурян», «Поэт» и др.)— символичны по характеру и объединены трепетными, поющими сочетаниями голубых, оранжевых, сероватых и зеленых тонов, которые вызывают в зрителе чувство ликования жизни. Люди,растения, звери, птицы и даже хищники мирно живут здесь одной семьей. Природа так непостижима и таинственна, что художник воспринимает ее совершенно по-детски — как чудесную сказку, как рай.

Верный своим пантеистическим убеждениям, Сарьян последовательно идет по пути кристаллизации собственного стиля. 1909 годом датируется начало второго периода в его творчестве. От сказочных, фантастических тем он переходит к непосредственному изображению действительности. Мгновенно просыхающая темпера давала художнику возможность работать быстро, широкими мазками, улавливая наиболее характерные черты виденного. На полотнах Сарьяна формы природы максимально упрощены и переданы большими плоскими пятнами. В то же время сарьяновский цвет цветоносен. Яркость света всегда обусловлена звучностью цвета.

Далеко в пустыне, на фоне бездонной синевы неба широко раскинула ветви финиковая пальма. Власть жгучего солнечного света наложила здесь свой отпечаток на все: людей, животных, стены домов. Пленительный дуэт света и цвета вызывает у зрителя незабываемое ощущение полноты жизни, радости или светлой печали. А прозрачные краски натюрморта «Цветы Армении» звучат как ликующий благовест. «Моя цель,—подчеркивал в эти годы художник,— достигнуть первооснов реализма, простыми средствами достигнуть наибольшей выразительности. Я говорю о той силе выражения, которая присуща всем подлинным произведениям искусства. Вернее, о той силе очарования, которой разными путями достигали во все времена».

Сила очарования сарьяновского искусства, которую художник обрел на собственном пути, заключается в свете, лучащемся на его полотнах из чистых, звучных красок. Этот свет воспринимается как символ непоколебимой веры, как выражение ковавшегося на протяжении веков жизнелюбия армянскго народа. Найденным им и ему одному подвластным живописным языком слагал Сарьян свои рассказывающие о вечности легенды. Точно так же, как и его современники — Комитас в музыке, а Тораманян и Таманян в архитектуре, Сарьян возродил традицию чистого, незамутненного цвета, открыл пути обновления национального стиля в армянской живописи. Двигаясь по этому пути, он и сыграл поистине неоценимую роль в истории армянской культуры.

Бурный творческий рост Сарьяна, как и многих его современников, прервался в 1915 году. Художник-патриот откладывает в сторону кисть и едет из Москвы в Эчмиадзин, чтобы оказать помощь спасшимся от резни беженцам из Западной Армении, больным детям.

На протяжении последующих пяти лет главное место в жизни Сарьяна занимает патриотическая деятельность. А в 1920 году, когда в Восточной Армении установилась Советская власть, художник без остатка посвятил себя священному делу восстановления родины. При его активном участии в Ереване был основан ряд важных очагов культуры: музей истории и изобразительного искусства, художественное училище, комитет по охране памятников старины.

Дух возрождения, царивший в Армении, вдохновил Сарьяна. Вера художника, страстно любящего жизнь и красоту, стала выражением всенародного воодушевления. Об этом новом — третьем — периоде своего творчества художник писал: «Я стремлюсь запечатлеть на холсте во всем его осязаемом бытии маленький клочок земли, перенесший множество невзгод, многократно оскверненный, но освященный кровью и верой. Этот клочок земли на склонах Арагаца я рассматриваю как источник надежды, как опору нашего древнего народа, по-матерински дарующего нам силу и волю».

На новых картинах Сарьяна (он писал в тот период маслом), воплотился в пленительной гармонии воздуха, света и красок собирательный образ Армении, пронизанный духом мира и возрождения. Тот же дух пронизывает и созданные Сарьяном герб Советской Армении и занавес первого государственного театра.

Привязанность великого художника к своей земле была столь велика, что, даже находясь на протяжении полутора лет в Париже, он, словно поэт-скиталец, по-прежнему воспевал красоту ар-

мянской природы. В 1928 году открылась его первая парижская персональная выставка; большая часть экспонированных на ней картин сгорела во время пожара на корабле по пути на родину. Но художник, перенесший трагедию войны и резни, сумел пережить и это — личное — горе.

Вплоть до конца долгой жизни мастера Родина оставалась его главной и неизменной темой. Великий поэт красок, он завещал поколениям огромную картинную галерею — более трех тысяч работ: пейзажи, портреты, натюрморты с фруктами и цветами, театральные оформления, панно, иллюстрации к книгам и сказкам. Жажда творчества никогда не покидала художника. В девяносто лет от роду он создавал вдохновленные неистощимым воображением полотна и рисунки, которые открыли в его искусстве новую страницу.

Стремление Сарьяна служить высоким идеалам искусства полностью гармонировало с его неиссякаемой любовью к родине. Эта любовь подарила Армении сарьяновскую Армению.

ШАЭН ХАЧАТРЯН

Արագած. Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների ժողովածուի շապիկը. 1929

Арагац. Обложка сборника стихов Аветика Исаакяна

I. АВТОПОРТРЕТ. 1909. Картон, темпера 47×45
Гос. Третьяковская галерея. Москва.

II. У ПОДНОЖИЯ АРАРАТА. СКАЗКА. 1904 Бумага, акварель 24×33
Музей М .Сарьяна. Ереван

III. ПОЭТ. НА СКЛОНАХ АРАГАЦА. 1906
Местонахождение неизвестно

IV. СЕЛЬСКИЙ ПЕЙЗАЖ. КАРАКИЛИСА. 1901 Холст, масло 45×60
Местонахождение неизвестно

V. ГОРЫ ГОХТАН. 1914. Холст, темпера 35×36
Собрание семьи А. Арутюняна. Москва

VI. УЛИЦА К ВЕЧЕРУ .1910 Картон, темпера 33,5×47
Собрание Г. Басмаджяна. Париж

VII. СТАРЫЙ ТИФЛИС. 1917. Холст, темпера 84×75
Гос. музей искусств Грузии. Тбилиси

VIII. ЗНОЙНЫЙ ДЕНЬ В ГОРАХ. 1926 Холст, масло 54×65
Николаевский художественный музей

IX. НАТЮРМОРТ. 1910. Картон, темпера 62,5×58,7
Горьковский художественный музей

X. ПОРТРЕТ И. ЩУКИНА. 1911. Холст, темпера 95×85
Собрание семьи И. Афанасьева. Ленинград

XI. ЖЕЛТЫЕ ЦВЕТЫ (ДЖАН-ГЮЛУМ). 1914. Холст, темпера 83×73
Музей «Коллекция А. Абрамяна». Ереван

XII. В ПЕРСИИ. 1915 Холст, темпера 102×110
Собрание В. Кунина. Ленингррад

XIII. КРАСНАЯ ЛОШАДЬ. 1919. Холст, маасло 104×140
Собрание семьи А. Арутюняна. Москва

XIV. ПРОДАВЕЦ ЗЕЛЕНИ. 1912. Холст, темпера 76,5×88,5
Киевский музей русского искусства

XV. ФИНИКОВАЯ ПАЛЬМА. 1911 Картон, темпера 106×71
Гос. Третьяковская галерея. Москва

XVI. ФРУКТЫ. 1911 Картон, темпера 50×66,8
Астраханская картинная галерея

XVII. АРАРАТ. 1923. Холст, масло 36×47
Собрание А. Кариняна. Ереван

XVIII. ПОРТРЕТ К. КАМСАРАКАНА. 1935. Холст, масло 45×38
Музей М. Сарьяна, Ереван

XIX. АПРЕЛЬСКИЙ ПЕЙЗАЖ. 1944 Холст, масло 54×73
Собрание семьи И. Баграмяна. Москва

XX. ПОРТРЕТ АКАДЕМИКА Г. АЧАРЯНА. 1943 Холст, масло 67×75
Музей литературы и искусства. Ереван

XXI. НАТЮРМОРТ. ФРУКТЫ И ОВОЩИ. 1934. Холст, масло 73×92
Собрание Г. Тарвердяна. Ереван

XXII. ОКТЯБРЬ В ЕРЕВАНЕ. 1961 Холст, масло 79×102
Гос. музей искусства народов Востока. Москва

XXIII. БЕРЕГА ЗАНГУ. МЕЛЬНИЦЫ. 1930 Холст, масло 50×61
Собрание Р. Аристакесяна. Ереван

На обложке:

ЦВЕТЫ АРМЕНИИ. 1916 Холст, темпера 72×65
Музей русского искусства. Киев

ГЕГАМСКИЕ ГОРЫ. 1926. Холст, масло 70×70
Музей М. Сарьяна. Ереван

Մատենաշարի խմբագիր՝ Շ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Նկարիչ՝ Վ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
«Էրեբունի» հրատարակչության տնօրեն՝ Վ. ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Редактор серии Ш. Хачатрян
Художник В. Татевосян
Директор издательства «Эребуни» В. Карагезян

«Վրձնի հայ վարպետներ» շարքի տեքստերը տպագրված են Երևանի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատում (Երևան-9, Տերյան, 91)

Գունավոր վերատպությունների համար, որոնք տպվել են Ֆինլանդիայում իբրև նվիրատվություն, Մշակույթի հայկական ֆոնդը շնորհակալություն է հայտնում «Էրեբունի» հրատարակչությանը:

Тексты альбомов из серии «Армянские мастера кисти» напечатаны на Ереванском полиграфкомбинате им. Акопа Мегапарта (Ереван-9, ул. Теряна, 91).

За цветные репродукции, безвозмездно напечатанные в Финляндии, Армянский фонд культуры приносит благодарность издательству «Эребуни».

●

Հարգելի գնորդ, «Վրձնի հայ վարպետներ» շարքի ձեռք բերումով (յուրաքանչյուրի արժեքն է 2 ռուբլի), Դուք ձեր նպաստը կբերեք Մշակույթի հայկական ֆոնդի հայրենանվեր ձեռնարկումներին:

Уважаемый покупатель, приобретая альбомы из серии «Армянские мастера кисти» (каждый стоимостью по 2 рубля), Вы вносите свою лепту в патриотическую деятельность Армянского фонда культуры.

MASTERS OF
ARMENIAN
PAINTING

MARTIROS SARIAN